**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 10-րդ դասարան (տարեկան 68 ժամ)**
**Դասընթացի թեմատիկ պլանավորումը**

| N | Թեմա: Դաս | Աղբյուրը | Էջեր | Վերջնարդյունքներ | Ժամեր |
|---|---|---|---|---|---|
| **Թ-1** | **ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ: ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ** | | | | **(11 ժամ)** |
| 1. | Աշխարհագրական գիտության պատմական զարգացումը, կառուցվածքը և արդի խնդիրները: Աշխարհագրական մշակույթ և մտածողություն | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 10-14 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Վերլուծել աշխարհագրական գիտության զարգացման պատմական փուլերի հիմնական առանձնահատկությունները:<br>• Տարբերակել աշխարհագրական մտածողության չորս հիմնական հատկանիշները: | 1 |
| 2. | Աշխարհագրության հետազոտության մեթոդները | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017<br><br>Թեմա 1, սովորողի ուսումնական նյութ, | <br><br><br>1-3 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• *Բացատրել* աշխարհագրական հետազոտության որոշ (նկարագրական, համեմատական, դաշտային հետազոտության, քարտեզագրական, մաթեմատիկական, վիճակագրական, ԱՏՀ) մեթոդների կիրառական նշանակությունը: | 1 |
| 3. | *Գործնական աշխատանք: Դաշտային հետազոտության մեթոդի միջոցով հաշվել մոտակա գետակի կամ գետի ջրի ծախսը, օրական հոսքը:* | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 20-22 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Դաշտային հետազոտության մեթոդի միջոցով հաշվել մոտակա | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | գետակի կամ գետի ջրի ծախսը, օրական հոսքը: | |
| 4. | Աշխարհագրական հետազոտության մեթոդները (շարունակության) | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 23-27 | | 1 |
| 5. | *Գործնական աշխատանք: Մաթեմատիկական մեթոդով հաշվել աստիճանային կոռելյացիայի գործակիցը:* | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 28-29 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• *Բացատրել* մաթեմատիկական մեթոդի կիրառական նշանակությունը: | 1 |
| 6. | Աշխարհագրական քարտեզներ (դասակարգումը, պայմանական նշաններ, պրոյեկցիաներ, աղավաղումներ) | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 34-40 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Դասակարգել քարտեզները՝ ըստ տարբեր հատկանիշների (պրոյեկցիա, մասշտաբ, բովանդակություն, տարածքի ընդգրկում, պատկերման եղանակ և այլն):<br>• Կազմել քարտեզագրամներ և քարտեզադիագրամներ:<br>• Բացատրել քարտեզագրական պրոյեկցիաների և աղավաղումների կապը:<br>• Կազմել որևէ բովանդակության քարտեզի պայմանական նշանների լեգենդա:<br>• Համեմատել հավասարանկյուն, հավասարամեծ և ազատ պրոյեկցիաների առանձնահատկություն- | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ները քարտեզագրական աղա-վաղումների տեսանկյունից և բացատրել այդ մեթոդներով պատկերված քարտեզների կիրա-ռական նշանակությունը: | |
| 7. | Տեղագրական քարտեզներ | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 44-49 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>•*Ընտրել* որևէ խոշորամասշտաբ տե-ղագրական քարտեզ, *կազմել* դրա համարակալման անվանակարգը և պայմանական նշանների լեգենդան:<br>•*Որոշել* որևէ տեղագրական քարտեզի վրա տարված ազիմուտները, ուղղու-թյան անկյունները, ուղղության (գծի) մագնիսական հակումը և մագնի-սական խոտորումը: | 1 |
| 8. | *Գործնական աշխատանք: Լանջի թեքության որոշում համադրման սանդղակի միջոցով, մակերեսների և կորագծերի չափում, ռելիեֆի պատկերագծում, կտրվածքի կազմում:* | Թեմա 1, սովորողի ուսումնական նյութ | 5-7 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>•*Պատկերագծել* տեղանքի դրական (լեռ) և բացասական (գոգավորու-թյուն, լեռնահովիտ) ռելիեֆի ձևեր, *կազմել* ռելիեֆի կտրվածք:<br>•Տարբեր մեթոդներով քարտեզի վրա *չափել* որևէ տարածքի մակերեսը, կորագիծ տեսք ունեցող օբյեկտների (գետ, տրանսպորտային ուղի) երկա-րությունը: | 1 |
| 9. | Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ) և թվային քարտեզներ: Գլոբալ տեղորոշման համակարգ (ԳՏՀ) | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., | 51-55 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>•Բացատրել ԱՏՀ-ի էությունը և կիրա-ռությունը: | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «Զանգակ», 2017 | | •Կիրառել գլոբալ տեղորոշման համակարգի (GPS) տեխնիկական միջոցները տեղանքում և ԱՏՀ (GIS) միջավայրում՝ առօրյա կյանքում ու հետազոտական նպատակներով խնդիրներ լուծելիս: | |
| 10. | *Գործնական աշխատանք: ԱՏՀ կիրառմամբ ՀՀ վարչական քարտեզի կազմում:* | Թեմա 1, սովորողի ուսումնական նյութ | 11-12 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>•Կիրառել ԱՏՀ-ն (GIS) քարտեզագրական պարզ խնդիրներ լուծելիս: | 1 |
| 11. | «Աշխարհագրության ներածություն և մեթոդներ: Քարտեզագրություն» թեմայի ամփոփում | | | | 1 |
| **Թ-2** | **ԵՐԿՐԱԳՈՒՆԴ** | | | | **(10 ժամ)** |
| 12. | Երկրի ձևը, չափերը, ներքին կառուցվածքը: Ապարներ, դրանց երկրաբանական շրջապտույտը | Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ | 1-5 | ***Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է կարողանա.***<br>•*Բնորոշել* Երկիր մոլորակի ձևը, չափերն ու ներքին կառուցվածքը:<br>•*Բացատրել* սալերի տեկտոնական շարժման պատճառներն ու հետևանքները:<br>•*Բնորոշել* սալերի սահմաններում ընթացող տարբեր տեկտոնական գործընթացները (կղզային աղեղների, օվկիանոսային փողրակների, միջին օվկիանոսային և մայրցամաքային լեռնաշղթաների առաջացումը):<br>•*Բացատրել* ապարների երկրաբանական շրջապտույտը: | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13. | Հրաբուխներ և երկրաշարժեր: Սալերի տեկտոնական շարժումը: Պլատֆորմներ և գեոսինկլինալներ | Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ | 6-12 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• *Վերլուծել* գործող հրաբուխների և երկրաշարժերի աշխարհագրական տարածման առանձնահատկությունները: | 1 |
| 14. | Հողմահարում: Երկրի մակերևույթի միկրոձևեր | Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ | 12-17 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• *Ներկայացնել* ռելիեֆաստեղծ հիմնական գործոններն ու ռելիեֆի ձևերը:<br>• Որոշել կլիմայական տարբեր պայմաններում գերակշռող հողմահարման տեսակը: | 1 |
| 15. | Լանջային պրոցեսներ. մարդու ազդեցությունը | Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ | 17-21 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Ներկայացնել ռելիեֆաստեղծ հիմնական գործոններն ու ռելիեֆի ձևերը:<br>• Բնորոշել հիմնական լանջային գործընթացները (սողանք, քարաթափում, սոլիֆլյուկցիա, սելավ և այլն): | 1 |
| 16. | Բնական աղետներ. առաջացումը, դասակարգումը, տեսակները | Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ | 22-27 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Բնորոշել բնական աղետների առաջացման և տարածման աշխարհագրական առանձնահատկությունները: | 1 |
| 17. | *Կրկնություն* | | | | 1 |
| 18. | Երկրի պտույտն իր առանցքի շուրջը, | Մ. Մանասյան և | 63-65 | *Թեմայի նպատակին հասնելու* | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | դրա աշխարհագրական հետևանքները | ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | | *համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Վերլուծել երկրագնդի օրական պտույտի աշխարհագրական հետևանքները: | |
| 19. | Երկրագնդի ժամային գոտիները: Տեղական և գոտիական ժամանակ: *Գործնական աշխատանք:* Ժամային գոտիների որոշման վերաբերյալ խնդիրների լուծում | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 66-69 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Վերլուծել երկրագնդի տարեկան պտույտի աշխարհագրական հետևանքները:<br>• Տարբերակել համաշխարհային, գոտիական, տեղական և դեկրետային ժամանակները:<br>• Որոշել Երկրի մակերևույթի որևէ կետում տեղական և գոտիական ժամանակը՝ աշխարհագրական կոորդինատների միջոցով: | 1 |
| 20. | Երկրի տարեկան պտույտը, դրա աշխարհագրական հետևանքները | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 69-73 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Վերլուծել երկրագնդի տարեկան պտույտի աշխարհագրական հետևանքները: | |
| 21. | «Երկրագունդ» թեմայի ամփոփում | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 74 | - | |
| **Թ-3** | **ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ** | | | | **(4 ժամ)** |
| 22. | Համամոլորակային և տեղական (լոկալ) ջերմային հաշվեկշիռներ | Թեմա 3, սովորողի ուսումնական | 1-5 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նյութ | | •Վերլուծել համամոլորակային և տեղական ջերմային հաշվեկշիռները: | |
| 23. | Եղանակային պայմաններ և երևույթներ | | 5-11 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Բացատրել հիմնական եղանակային երևույթներն ու գործընթացները (կարկուտ, մառախուղ, ցող, եղյամ, ջերմաստիճանի ուղղաձիգ փոփոխություն և այլն):<br>• Բացատրել Երկրի ջերմոցային էֆեկտի էությունը: | 1 |
| 24. | Քաղաքային միկրոկլիմա | Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ | 11-16 | Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>• Բացատրել քաղաքային միկրոկլիմայի առանձնահատկությունները: | 1 |
| 25. | *Գործնական աշխատանք: Ջերմային հաշվեկշիռների վերաբերյալ առաջադրանքների կատարում* | Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ | 16-18 | - | 1 |
| **Թ-4** | **ԳԵՏԱՅԻՆ ՋՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ** | | | | **(5 ժամ)** |
| 26. | Ջրհավաք ավազանը որպես համակարգ: Գետի բնութագրիչները: Հիդրոգրաֆ | Թեմա 4, սովորողի ուսումնական նյութ | | Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>• Սահմանել գետի հուն, հովիտ, ողողատ, դարավանդ, ավազան հասկացությունները:<br>• Հաշվել գետի ծախսն ու հոսքը:<br>• Բնութագրել ջրհավաք ավազանը որպես համակարգ:<br>• Տարբերակել հորդացման և տարե- | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | կան հիդրոգրաֆները: | |
| 27. | Գետահունային պրոցեսներ: Հյուլստրոմի կորը | Թեմա 4, սովորողի ուսումնական նյութ | 5-7 | Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>• Բացատրել գետահունային պրոցեսներն ըստ Հյուլստրոմի կորի:<br>• Թվարկել գետային զալարների առաջացման պատճառները:<br>• Սահմանել ծանծաղուտ, միջընթացք և նավուղի հասկացությունները:<br>• Բացատրել ջրվեժների, սահանքների և գետաբերանների տարբեր տիպերի առաջացումը: | 1 |
| 28. | Մարդու ազդեցությունը ջրաբանական գործընթացների վրա | Թեմա 4, սովորողի ուսումնական նյութ | 8-9 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Բացատրել մարդկային գործունեության ազդեցությունը ջրաբանական շրջապատույտի առանձին բաղադրիչների վրա: | 1 |
| 29. | *Գործնական աշխատանք* | Թեմա 4, սովորողի ուսումնական նյութ | 10-11 | *Թեմայի նպատակին հասնելու հա սովորողը պետք է կարողանա՝*<br>• Կառուցել և վերլուծել որևէ գետի հորդացման հիդրոգրաֆը: | 1 |
| 30. | «Գետային ջրաբանություն» թեմայի ամփոփում | Թեմա 4, սովորողի ուսումնական նյութ | 11 | | 1 |
| **Թ-5** | **ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ** | | | | **(7 ժամ)** |
| 31. | Աշխարհի քաղաքական բաժանումը (հնագույն ժամանակներից մինչև XX դարի սկիզբը) | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, | 125-127 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Վերլուծել քաղաքական քարտեզի | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Եր., «Զանգակ», 2017 | | քանակական և որակական փոփոխությունները:<br>• Բնորոշել աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման հիմնական փուլերը, վերլուծել քաղաքական բաժանումները պայմանավորող հիմնական գործոնները: | |
| 32. | Աշխարհի քաղաքական բաժանումը (նորագույն ժամանակներ) | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 127-131 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Բացատրել աշխարհի քաղաքական բաժանման ժամանակակից գործընթացները, վերլուծել դրանց ընթացքի առանձնահատկությունները: | 1 |
| 33. | Աշխարհի երկրների դասակարգումն ու տիպաբանությունը (զարգացած և զարգացող երկրներ, պետությունների դասակարգումն ըստ կառավարման ձևի և պետական կառուցվածքի) | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 134-137 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Համադրել երկրի քաղաքաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքերը, գնահատել դրանց ազդեցությունը համաշխարհային, տարածաշրջանային և տեղական մակարդակներով:<br>• Բնորոշել զարգացած և զարգացող երկրները, առանձնացնել զարգացած և զարգացող երկրները՝ ըստ ենթախմբերի:<br>• Դասակարգել պետությունները՝ ըստ կառավարման և պետական տարածքային կառուցվածքի ձևերի: | 1 |
| 34. | Քաղաքական աշխարհագրություն և | Մ. Մանասյան և | 143-146 | *Թեմայի նպատակին հասնելու* | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | աշխարհաքաղաքականություն | ուրիշ., Աշխարհա-գրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | | *համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Բացատրել քաղաքական աշխար-հագրության ու աշխարհաքաղաքա-կանության էությունը:<br>• Բնորոշել աշխարհաքաղաքակա-նության հիմնական տեսություններն ու հայեցակարգերը:<br>• Վերլուծել աշխարհաքաղաքակա-նության ազդեցությունը պետություն-ների առաջացման, զարգացման գոր-ծընթացների վրա: | |
| 35. | ՀՀ-ն ժամանակակից աշխարհաքաղա-քական գործընթացներում | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհա-գրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Գնահատել ՀՀ-ի տեղը՝ ժամանա-կակից համամոլորակային և տարա-ծաշրջանային աշխարհաքաղաքա-կան գործընթացների համատեքս-տում: | 1 |
| 36. | *Գործնական աշխատանք* | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհա-գրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 156 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Ներկայացնել աշխարհի քաղաքա-կան քարտեզի փոփոխությունները Երկրորդ աշխարհամարտից հետո:<br>• Առանձնացնել պետությունները՝ ըստ աշխարհագրական դիրքի:<br>• Դասակարգել պետությունները՝ ըստ զարգացման մակարդակների: | 1 |
| 37. | «Աշխարհի քաղաքական բաժանումը» թեմայի ամփոփում | Թեմա 5, սովորողի | 2 | | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ուսումնական նյութ | | | |
| Թ-6 | ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ | | | | (11 ժամ) |
| 38. | Աշխարհի բնակչության թիվը և շարժը | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017<br><br>Թեմա 6, սովորողի ուսումնական նյութ, ի լրումն | 157-161<br><br>1-5 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• *Ներկայացնել* աշխարհի բնակչության թվի շարժընթացի բնորոշ գծերը պատմական տարբեր ժամանակահատվածներում,<br>• *բացատրել* բնակչության թվի շարժի աշխարհագրական առանձնահատկությունները:<br>• *Վերլուծել* աշխարհի բնակչության թվի ավելացման հիմնախնդիրը Թ. Մալթուսի և Է. Բոսերուպի տեսությունների համատեքստում: | 1 |
| 39. | Բնակչության վերարտադրություն: Ժողովրդագրական անցման տեսությունը | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017<br><br>Թեմա 6, սովորողի ուսումնական նյութ, ի լրումն | 161-165<br><br>6-7 | Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>• Ներկայացնել բնակչության վերարտադրության տիպերը:<br>• Բացատրել «ժողովրդագրական պայթյունը» և «ժողովրդագրական ճգնաժամը»:<br>• Վերլուծել բնակչության բնական շարժի և ժողովրդագրական քաղաքականության պատճառահետևանքային կապերն ու դրանց կառավարման | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ուղղությամբ իրականացվող միջոցառումները:<br>• Վերլուծել ժողովրդագրական անցման փուլերը:<br>• Վերլուծել ծնելիության բարձր ցուցանիշ ունեցող աֆրիկյան որևէ երկրի բնակչության վերարտադրության պատկերը, գտնել պատճառահետևանքային կապերն ու կատարել հետևություններ: | |
| 40. | Բնակչության տեղաբաշխման գործոնները | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017<br><br>Թեմա 6, սովորողի ուսումնական նյութ, ի լրումն | 181-185 | Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>• *Վերլուծել* բնակչության տեղաբաշխման վրա ազդող գործոնները: | 1 |
| 41. | Արդի միգրացիայի գործընթացները, դրանց հետևանքներն ու կարգավորման հիմնախնդիրը | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017<br><br>Թեմա 6, սովորողի ուսումնական նյութ, ի լրումն | 186-190<br><br>8-13 | Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>• *Բացատրել* միգրացիայի գործընթացը Լիի միգրացիայի մոդելի հիման վրա, *ներկայացնել* միջազգային միգրացիայի հիմնական ուղղությունները:<br>• *Վերլուծել* արդի միգրացիայի գործընթացներն ու դրանց հետևանք- | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ները, *գնահատել* միգրացիայի կարգավորման անհրաժեշտությունը:<br>• *Վերլուծել* աշխատուժի միջազգային միգրացիայի գործընթացները, դրանց պատճառներն ու հետևանքները: | |
| 42. | *Գործնական աշխատանք* | Թեմա 6, սովորողի ուսումնական նյութ | 14-17 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• Ուսումնասիրել և վերլուծել վերարտադրության առանձնահատկությունները որևէ զարգացող երկրի օրինակով:<br>• Վերլուծել բնակչության թվի կրճատման պատճառները բալկանյան երկրների օրինակով: | 1 |
| 43. | Բնակչության սեռատարիքային կազմը | Մ. Մանասյան և ուրիշ., Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017<br><br>Թեմա 6, սովորողի ուսումնական նյութ, ի լրումն | 165-170<br><br>17-19 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• *Վերլուծել* բնակչության սեռատարիքային կազմի առանձնահատկությունները տարբեր տիպի երկրներում:<br>• *Բացատրել* բնակչության կյանքի միջին տևողության և կենսամակարդակի տարբերությունները զարգացման տարբեր մակարդակների երկրներում: | 1 |
| 44. | Տարաբնակեցումը և դրա ձևերը | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհագրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 190-193<br><br>20 | Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>• *Ներկայացնել* տարաբնակեցման հիմնական ձևերը,<br>• *համեմատել* դրանց աշխարհագրական տարբերությունները, | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Թեմա 6, սովորողի ուսումնական նյութ, ի լրումն | | • *վերլուծել* տարաբնակեցման վրա ազդող գործոններն ու արդի միտում-ները: | |
| 45. | Ուրբանիզացում, գործոնները և զարգացման միտումները | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհա-գրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 193-200 | Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>• *Վերլուծել* ուրբանիզացման գոր-ծընթացները, դրա գործոնները, զար-գացման միտումները, խոշոր քաղաք-ների հիմնախնդիրները: | 1 |
| 46. | Քաղաքների տիպերը | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհա-գրություն 10, Եր., «Զանգակ», 2017<br><br>Թեմա 6, սովորողի ուսումնական նյութ, ի լրումն | 200-203<br><br>21-26 | Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>• *Նկարագրել* քաղաքների տիպերը, *վերլուծել* դրանց հատակագծային և քաղաքաշինական տարբերություն-ները:<br>• *Բնորոշել* կայուն քաղաքը, օրինակ-ների միջոցով *գնահատել* քաղաքների զարգացման կարևորությունն ու հե-ռանկարը: | 1 |
| 47. | *Գործնական աշխատանք* | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհա-գրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | 204-205 | | 1 |
| 48. | «Աշխարհի բնակչություն» թեմայի ամփոփում | Մ. Մանասյան և ուրիշ., Աշխարհա- | 206-207 | | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | գրություն 10, Եր., «Զանգակ», 2017 | | | |
| Թ-7 | ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ | | | | (8 ժամ) |
| 49. | Աշխարհագրական միջավայր, բնական պայմաններ և ռեսուրսներ | Ա. Պոտոսյան և ուրիշ., Աշխարհագրություն 11, Եր., «Զանգակ», 2017 | 23-27 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• *Բնորոշել* բնական պայմաններն ու ռեսուրսները որպես աշխարհագրական միջավայրի գլխավոր տարրեր:<br>• *Գնահատել* բնական ռեսուրսների տնտեսական, սոցիալական և էկոլոգիական նշանակությունը:<br>• *Վերլուծել* բնական պայմանների ազդեցությունը մարդու տնտեսական գործունեության վրա:<br>• *Մեկնաբանել* արդյունավետ ռեսուրսօգտագործման արդի սկզբունքները:<br>• Վերլուծել բնական ռեսուրսները՝ ըստ սպառման և փոխարկելիության հնարավորությունների: | 1 |
| 50. | Աշխարհի բնակչության և երկրների ապահովվածությունը տարբեր տեսակի բնական ռեսուրսներով | Ա. Պոտոսյան և ուրիշ., Աշխարհագրություն 11, Եր., «Զանգակ», 2017 | 28-34 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• *Ներկայացնել* ըստ ծագման բնական ռեսուրսների աշխարհագրական տեղաբաշխումը (տարածումը):<br>• *Գնահատել* մարդկության և ա- | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ռանձին երկրների ապահովվածու-թյունը տարբեր տեսակի բնական ռեսուրսներով: | |
| 51. | Ընդերքի ռեսուրսներ | 1.Լ.Վալեսյան, Բնօգտագործման և բնապահպա-նություն, 9-րդ դասարան, Եր., «Լույս» 2005, էջ 28-36: 2.Ա.Պոտոսյան և ուրիշ., Աշխարհագրություն 11, «Զան-գակ», 2017 | 28-36<br>28-29 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝*<br>• *Ներկայացնել* հողային ռեսուրս-ների աշխարհագրական տեղաբաշ-խումը (տարածումը):<br>• *Գնահատել* մարդկության և ա-ռանձին երկրների ապահովվածու-թյունը հողային ռեսուրսներով: | 1 |
| 52. | Հողային ռեսուրսներ | 1.Լ.Վալեսյան, Բնօգտագործման և բնապահպա-նություն, 9-րդ դասարան, Եր., «Լույս» 2005, 2.Ա.Պոտոսյան և ուրիշ., Աշխար-հագրություն 11, «Զանգակ», 2017 | 62-71<br>29-32 | | 1 |
| 53. | Կլիմայական և տիեզերական ռեսուրսներ | Աշխարհագրություն 11, «Զան-գակ», 2017 | 116-121 | *Թեմայի նպատակին հասնելու հա-մար սովորողը պետք է կարո-ղանա՝*<br>• Ներկայացնել կլիմայական և տիեզերական ռեսուրսների | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | աշխարհագրական տեղաբաշխումը (տարածումը): <br>• Գնահատել մարդկության և առանձին երկրների ապահովվածությունը կլիմայական և տիեզերական ռեսուրսներով: | |
| 54. | Ջրային ռեսուրսներ: Համաշխարհային օվկիանոսի ռեսուրսներ | Աշխարհագրություն 11, «Զանգակ», 2017 Թեմա 7, սովորողի ուսումնական նյութ, ի լրումն | 35-36 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* <br>• Ներկայացնել ջրային ռեսուրսների աշխարհագրական տեղաբաշխումը (տարածումը): <br>• Գնահատել մարդկության և առանձին երկրների ապահովվածությունը ջրային ռեսուրսներով: <br>• Բացատրել Համաշխարհային օվկիանոսի ջրային և ընդերքի օգտագործումն ու նշանակությունը մարդկության համար: | 1 |
| 55. | Կենսաբանական ռեսուրսներ | Աշխարհագրություն 11, «Զանգակ», 2017 | 32-33, 139-147, 148-150 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* <br>• Ներկայացնել կենսաբանական ռեսուրսների աշխարհագրական տեղաբաշխումը (տարածումը): <br>• Գնահատել կենսաբանական ռեսուրսների նշանակությունը բնության և մարդկության համար: | 1 |
| 56. | Ռեկրեացիոն ռեսուրսներ | Աշխարհագրություն 11, «Զանգակ», 2017 | 37-38 | *Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* <br>• Ներկայացնել ռեկրեացիոն ռե- | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | սուրսների աշխարհագրական տեղաբաշխումը (տարածումը):<br>• Գնահատել ռեկրեացիոն ռեսուրսների նշանակությունը մարդկության համար: | |
| 57. | Ուսումնական նախագիծ | | | | Ընդամենը՝ 12 ժամ |

12ժամ՝ պահուստային (ուսումնական նախագիծ)